ԳՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ ՉՈՒՆԵՑԱ ՍԵՐՈՒՆԴ, ՈՐԻՆ ՊԱՏԿԱՆԵՄ»

(Արքմենիկ Նիկողոսյան – Հուսիկ Արա)

Արքմենիկ Նիկողոսյան *– Այս տարի Ծաղկաձորում տեղի ունեցած երիտասարդ գրողների հերթական խորհրդակցության ժամանակ, որին դու էլ էիր ներկա, ավագ գրողներն իրենց խոսքում երբեմն ասում էին, թե վերջին հինգ-վեց տարիներին գրական ասպարեզ մտած երիտասարդներն արդեն կայացել են որպես սերունդ: Սա, իմ կարծիքով, ավելորդ հաճոյախոսություն էր, մանավանդ որ՝ ասվածն այդպես էլ չհիմնավորվեց քիչ թե շատ լուրջ փաստարկումներով: Ընդհանրապես խոսք չեղավ սերունդ հասկացության պարագրկումների, նրա էության մասին, վերջիվերջո՝ սերունդ ասվածը նույն տարիքի կամ գրեթե նույն տարիքի գրողների սոսկական, այսպես ասած՝ հավաքածու չէ: Այն, իմ կարծիքով, առնվազն ենթադրում է ստեղծաբանական, գեղագիտական ինչ-ինչ ընդհանրականություններ, որի արդյունքում նույն դաշտում են հայտնվում իրարից անհատական ոճով տարբերվող մի քանի գրողներ: Ինչպես ասենք՝ 1960-ականներին գրասպարեզ մտած բանաստեղծները: Կուզեի հենց այստեղից էլ սկսենք մեր զրույցը. ի՞նչ է սերունդը, մանավանդ որ՝ բանավոր զրույցներում շատ ենք կատակով խոսում այն մասին, որ դու կարծես թե նույնիսկ պարզ սերնդային առումով միայնակ ես մնացել. ոչ ավագներն են քեզ ընդունում իրենց շարքերը, ոչ երիտասարդները: Կարծես թե:*

Հուսիկ Արա *– Սերունդ ասվածը շատ պայմանական բան է, թեպետ ես էլ եմ հաճախ օգտագործում: Պայմանական է այն առումով, որ գրականությունը, հայտնի է, անհատի գործ է, անհատներն են ստեղծում և հենց սերունդ կոչվածը անհատների մի խումբ է: Նրանք պայմանականորեն են միասին: Քո ասած 60-ա-*

կաններին տասնյակներով բանաստեղծներ ասպարեզ իջան, բայց սերունդ ասվածն ապահովվեց նրանցից չորս-հինգի շնորհիվ: Կա ժամանակի ընդհանուր զգացողություն և գեղագիտական ճաշակների ընդհանուր ըմբռնում: Կա ինչ-որ մի դաշտ, որտեղ գործում են ամեն մեկն իր համար, բայց և ինչ-որ ընդհանուր մի բանի ուղղված: Ճաշակի, մոտեցումների, արտահայտման ձևերի, ըմբռնումների ընդհանրականությունն է ապահովում սերունդ: 60-ականների սերնդի մյուս բանաստեղծների գոյություն-չգոյությունը օգտակար է մի կարևոր հանգամանքով, թե ինչպես կարելի է չգրել, հատկապես բակային, թաղային, միայն իմ գյուղում ու փոքրիկ քաղաքում տեղավորվող ինքնասպան հայրենասիրությամբ:

Ա. Ն. — Կարծես թե ամեն ինչ ճիշտ ես ասում, տրամաբանված, ես համաձայն եմ քո տեսակետներին, բայց ինձ թվում է, որ ամեն դեպքում, սերունդ կազմող գրողներին կապում է մի բան, որ արտաքին մակարդակում չի դրսևորվում, տեսանելի, վերլուծելի չէ: Ինձ միշտ զարմացրել է 60-ականների առաջատար բանաստեղծների այդքան տարբեր լինելը իրարից: Վերցրու, օրինակ, Հովհաննես Գրիգորյանի իջեցված ոճով, առօրեական-կենցաղային քողավորմամբ փիլիսոփայական սուզումներն ու Հենրիկ Էդոյանի մշակութաբանական շերտերի, ինտելեկտուալ խաղարկումների, ակադեմիական ճշգրտություններով կառուցված, ընկալման առումով երբեմն նաև փակ պոեզիան: Ի՞նչն է այդ բանաստեղծներին միացնում: Բայց արի ու տես, որ նրանք միասնական սերունդ դարձան: Բայց ահա 1970-80-ականներին ասպարեզ իջած բանաստեղծների մի խումբ՝ Աշոտ Ավդալյանը, Հակոբ Մովսեսը, Հրաչյա Բեյլերյանը, ինչ-որ առումով նաև Հրաչյա Թամրազյանը, որոնց բանաստեղծությունը կառուցվում էր միջնադարյան հայ պոեզիայի պոետիկայի նորօրյա խաղարկումների ու բառի՝ ծիսականության հասցված դրսևորումների վրա, և ընդհանրապես՝ նրանք ընդհանուր շատ բան ունեն, որպես սերունդ չկայացավ, միասնականությամբ չհատկանշվեց:

Հ. Ա. — 60-ականների սերունդն իր առջև խնդիր էր դրել նոր գրականություն ստեղծել, թարմացնել գրական դաշտը, բանաստեղծության մթերքը, շինանյութը: Իմ կարծիքով՝ դա էր, որ նրանց միացրեց: Իսկ Հակոբենց սերունդը չկայացավ երևի այն պատճառով, որ նրանք լինելով անհատներ, միասնական ինչ-որ

բանի չգնացին, այնուամենայնիվ: Կարծում եմ նաև գիտակցաբար խույս տվեցին՝ ընդհանուր կաթսայում չեփվելու զգուշավորությամբ: Սա անհատապաշտ սերունդն է: Ժամանակն էլ խանդարեց, բարենպաստ չեղավ նրանց համար: Մեր հասարակական-քաղաքական կյանքում, այսպես ասած, հեղաշրջումը սկսվեց 1988-ին, չէ՞, բայց պոեզիայում հեղաշրջումը, փաստորեն, սկսվել էր 60-ականներին: Հետո եղավ ազատություն, անկախություն: Նախկինում պոետները ձգտում էին ազատության, և հանկարծ եկան ու ասացին՝ դուք ազատ եք: Թվում էր, թե ազատության պայմաններում պոեզիայում իսկական պայթյուն կսկսվի, բայց դա տեղի չունեցավ: Եվ գուցե դա օրինաչափ էր, որովհետև ինչ-որ իմաստով պայթյունն արդեն եղել էր: Դա հիասթափեցրեց շատերին: Հատկապես 1980-ականների կեսերին ասպարեզ իջած բանաստեղծները, նաև որոշ արձակագիրներ, 1990-ականների կեսերին մինչև իսկ թողեցին գրականությունը, և սերունդը որպես այդպիսին չկայացավ: Ավելին՝ առաջացավ վակուում, դատարկ տարածություն: Հիմա մեր նոր բանաստեղծներն են եկել: Այսօրվա 18-30 տարեկանները պոեզիայում ի՞նչ են անում: Ի՞նչ միասնականությունների մասին կարող է խոսք լինել, երբ երբևէ այսպիսի տարաբնույթ հոսանքներ չեն եղել մեր պոեզիայում: Անգամ եթե նայենք 1920-ական թվականների համեմատությամբ: Այսօր, թեկուզ միայն «Գրեթերթում», տպագրվում են բանաստեղծներ, որոնցից ամեն մեկը մի ուղղության, մի ոճի է հարում: Բազմազանությունն, իհարկե, անցյալից ժառանգած ուժի և պոտենցիալի դրսևորում է, հայացքի շերտավորում է առաջանում, միատարրությունից խուսափելու ճիգ է և ազատ քննելու նախապայման: Գուցե այդ սերնդի միասնական դիտակետը տարհայաց լինելն է: Սա էլ է ժամանակի նոր դրսևորում:

Ա. Ն. – Նորերին դեռ կանդրադառնանք: Զգացիր, որ երկուսս էլ շատ բարձր կարծիքի ենք 60-ականների սերնդի բանաստեղծների մասին: Բայց գրողներ ու գրականագետներ կան, ասում են, որ Պարույր Սևակից հետո բանաստեղծ չենք ունեցել: Ինձ, ճիշտն ասած, այնքան էլ պարզ չէ, թե տվյալ դեպքում ինչ չափորոշիչներ են հաշվի առնվում: Քեզ՝ որպես բանաստեղծի, Պարույր Սևակից հետո հայ պոեզիայի հետագիծը ինչպե՞ս է ներկայանում:

Հ. Ա. – Ինձ էլ պարզ չեն այդպես ասողների չափորոշիչները,

բայց հստակ կարող եմ ասել, որ Սևակից հետո մենք ունեցանք պոետներ, որոնց աշխարհին ներկայացնելուց չենք ամաչի:

Ա. Ն. — Ես ավելին կասեմ՝ բանաստեղծության այն տեսակը, որին ձգտում էր հասնել Սևակը, իբրև տեքստ մարմնավորվեց իրենից հետո: Նկատի ունեմ առաջին հերթին Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունը: Թեպետ որոշներ թշնամանքով կընդունեն ասածս, քանզի Սևակի պարագային ինչ-ինչ կարծրատիպեր են գործում, որոնցից դուրս ինչ-որ բան ասելը հերետիկոսություն է համարվում: Ի դեպ, ասածս, որ Հովհաննես Գրիգորյանը զուտ բանաստեղծության տեսակի առումով իրականացրել է Սևակի երազանքը, նոր բան չէ: Նախ՝ դա շատ ակնհայտ է: Բացի այդ՝ մի առիթով գրականագետ Սեյրան Գրիգորյանն էլ է ընդգծել այդ հանգամանքը՝ ի դեպ, արժանանալով ավագներից Անահիտ Սահինյանի գրավոր, այսինքն՝ հոդվածի մակարդակով դժգոհությանը:

Հ. Ա. — Իմ համոզմամբ՝ հայերենով վերլիբր գրելը չափազանց դժվար է և Հովհաննես Գրիգորյանի պոեզիան հայերենով գրված լավագույն վերլիբրն է: Եթե հեռու չգնանք, նա գոնե այդ քայլը արեց Սևակից հետո, ով այդ ճկունությամբ վերլիբր չունի: Նրանից առաջ էլ Զարենցն ուներ վերլիբր, բայց նրանը ես համարում եմ ոչ մաքուր վերլիբր, կարող ենք բնորոշել՝ չարենցյան վերլիբր, ինչպես շրջանառում ենք սիմանթոյական սպիտակ բանաստեղծություն՝ իր բարձրագույն դրսևորումով: Կամ մի՞թե առաջընթաց չէ Հենրիկ Էդոյանի այսպես ասած՝ ինտելեկտուալ պոեզիան, որի մասին շատերն ասում են, թե սառն է: Ես այդպես չեմ կարծում: Էդոյանի բանաստեղծության մեջ կարող ես 5000-ամյա մշակութային շերտ գտնել: Ինձ նաև զարմացնում ու հիացնում է Արտեմ Հարությունյանի աշխարհայացքն ու աշխարհընկալումը: Նա շատ լայն ընդգրկումներով է նայում աշխարհին, ինչը, ցավոք, բացակայում է մեր երիտասարդ բանաստեղծների տեքստում: Նրանք սահմանափակվում են իրենց փողոցների իրականությամբ: Կընդունե՞ն Արտեմին, թե չեն ընդունի, կասեն՝ նրա պոեզիայում շատը ջուր է, կամ չգիտեմ, թե էլ ինչ կասեն, բայց այդ բանաստեղծի էրուդիցիան, մի անկյունից ամբողջ մոլորակը դիտարկելու կարողությունը, լայնախոհությունը պակասում էին ու պակասում են մեր պոեզիային:

Ա. Ն. — Հուսիկ, այժմ դանք դարասկզբի պոեզիայի երևումնե-

ին, նոր անուններին: Համաձայն չե՞ս, որ ամբողջականություն-ների, համակարգվածայնությունների բացակայություն է առկա, և որ ինչ-ինչ կտրտվածություն, հատվածականություն է նկատելի հատկապես երիտասարդ բանաստեղծների մոտ, թարմության պակաս: Ասածս, անշուշտ, ընդհանրական մակարդակի է և չի պարագրկում առանձին անհատների:

Հ. Ա. — Գիտես ինչ, ես շատ կարևոր եմ համարում 1988-ի այդ այսպես ասած՝ հեղաշրջումը, որի մասին քիչ առաջ ասում էի: Ոնց ուզում ես նայիր, դա կարմիր թելի պես անցել է մեր գրականության միջով: Գրողի ու գրականության միջով և իր ազդեցությունն է թողել: Քո ասած չկայանալու, չամբողջանալու պատճառներից մեկը ես համարում եմ դա: Զմոռանանք նաև, որ 1990-ականների ծանր տարիներին իսկապես քիչ գրականություն գրվեց: Ես իմ հոդվածներից մեկում անդրադարձել եմ այն խնդրին, որ գրական հերոս դարձավ այն մարդը, ով գրական բեռը երկար չէր կարող տանել: Եվ ոչ թե այն պատճառով, որ թույլ էր, այլ այնպես էր կառուցված գրական հերոսը, որ հոգնելու էր, երկար չէր կարողանալու դիմանալ: Այդպես բոմժն էլ կարող է դառնալ ուժեղ գրական հերոս: Ի վերջո, այդ հեղաշրջումից հետո պոեզիայում ստացվեց, այսպես ասած՝ «կորուսյալ սերունդ»: Եղան ժամանակներ, երբ մի տեսակ բոլոր ճանանապարհները գրականությունը փակուղի էին տանում: Դա զգալի է այդ շրջանի բոլոր պոետների մոտ: Շատերը թողեցին գրականությունը, ով էլ մնաց՝ կիսատ-պռատ բաների հասավ: Դա «կորուսյալ սերունդն» է պոեզիայի: Ես ինքս էլ այդ «կորուսյալ սերնդի» մաս եմ կազմում: «Կորուսյալ սերնդի» մաս են կազմելու նաև այսօր եկող երիտասարդ բանաստեղծները: Այսօր նրանք ազատություն ունեն, ամեն ինչ ունեն, բայց երիտասարդները, նաև ես ու, ընդհանրապես, բոլոր գրողները, ամբողջովին դեռ ձերբազատված չենք ինչ-ինչ բաներից, ներքուստ ազատ չենք: Որովհետև ազատությունը մեկ օրում չեն նվաճում, մեկ օրում ազատ չեն դառնում. դա սերունդների խնդիր է: Դեռ շարունակում ենք մեկումեջ ետ նայել, անցյալի հայացքը արտաքուստ մերժում ենք, սակայն ենթագիտակցաբար ձերբազատված չենք, աղի պես նստվածք կա (անգամ նրանց շնչառության մեջ, ովքեր որպես անհատ չեն ձևավորվել այդ անցյալի մեջ), դեռ ջրեր են հարկավոր՝ ողողելու, լվանալու համար: Այսօրվա 18-30 տարեկան պոետների մոտ ես

չփոթ եմ զգում, մի տեսակ թափառում են ստվերների պես, չեն տեսնում այն պատը, որտեղ պիտի հանգրվանեն: Ազատության փնտրտուքը դեռ կա, դա նվաճելու խնդիրը դեռ կա: Գուցե հաջորդ սերունդը կարողանա այդ խնդիրները լուծել, գրական բում առաջացնել, հստակ ուղղվածություն ունենալ: Եվ գուցե այդ պատճառով է, որ այդքան բազմաոճ է այսօրվա մեր պոեզիան, և այսօրվա պոետներին չես կարող սերունդ համարել: Տես, ես ասում եմ երիտասարդ բանաստեղծներ, չեմ ասում սերունդ: Լիարժեք պոեզիան է պակասում նրանց խումբը սերունդ կոչելու համար: 1980-ականներին բանաստեղծները, որ թռիչքի մեջ զարկվեցին, թևաթափ եղան, շռնդալից էին մտել գրականություն, բայց այսօր մուտքի այդ շռնդալիությունը չկա: Նարինե Ավետյանն էր թռիչքների պոետ, բայց նա առաջին գրքից նետո լռեց:

Ա. Ն. — *Բայց ավելի լավ չէ՞ Նարինեի այդ լռությունը, քան շատ-շատերի բազմագիրք շատախոսությունը:*

Հ. Ա. — *Չէի ասի: 21-րդ դարում պոեզիայի զարգացման ընույթն այնպիսին է, որ մի բարալիկ գրքույկով քո տեղը գրականության մեջ չես կարողանալու նվաճել, որքան էլ այդ գիրքը հզոր լինի: Այն մոռացվելու է: Մի արտահայտություն կա՝ անցել է 20-ամյա վաղամեռիկ հանճարների ժամանակը...*

Ա. Ն. — *Հենրիկ Էդոյանն է առել... Ու, ի դեպ, քեզ տված հարցազրույցում:*

Հ. Ա. — *Շատ ճիշտ է ասել: Հիմա գրականությունը ավելի լուրջ, հետևողական աշխատանք է պահանջում, տասնամյակների աշխատանք:*

Ա. Ն. — *Հակառակ այն բանին, որ դու քեզ էլ ես մտցնում «կորուսյալ սերնդի» մեջ, բայց իմ կարծիքով՝ դու արդի հայ պոեզիայի այս նոր փուլի հատկանիշները պայմանավորող դեմքն ես լինելու: Եվ ամենից առաջ այն պատճառով, որ դու մի տեսակ չեզոք դիրքում ես, և այդ չեզոքության շնորհիվ քո պոեզիան կամրջում-միասնականացնում է արդեն ավագ պոետների ստեղծածն ու երիտասարդ բանաստեղծների ստեղծածը: Ու դրանով՝ ինքնատիպ բանաստեղծներից ես, եթե չասեմ՝ ամենաինքնատիպը՝ նույնիսկ քո խարխափումներով ու որոնումներով: Դու որքա՞ն ես զգում քո այդ «կամրջային» վիճակը, որն առաքելության խորհուրդ ունի իր մեջ:*

Հ. Ա. — Այսպիսի տող ունեմ «Ժամանակի մեջ չունեցա սերունդ, որին պատկանեմ»: Իմ հասակակիցներից միայն ես մնացի: Ինձ հետ ուսանողական տարիներին շատ ստեղծագործողներ կային, շնորհքով տղերք, որոնք հիմա չկան, չեն գրում: Միայն Մհեր Արշակյանն է, ով, ափսոս, խորացավ լրագրության մեջ: Դրա համար այսօր կամ սվագների հետ եմ ընկերություն անում կամ ձեր հետ: Հստակ՝ ոչ այն կողմում եմ, ոչ էլ այս կողմում: Տարբեր ու հակասող հայացքով նայել բանաստեղծությանը, շրջահայաց լինել և մոտենալ զուգահեռներ չգտնող ճանապարհներով. դրանք թելեր են, որոնք մի տեղ պիտի քարկապ տամ: Այդպիսի փորձեր արել եմ: Ընդհանրապես, այն պատկերացումը, որ ունեմ պոեզիայի մասին, դրա համեմատ իմ գրածներն ընդամենը փորձեր են: Հուսով եմ՝ մի օր կստացվի: Կան զգացողություններ մեր երիտասարդների մոտ, ասենք՝ Աննա Դավթյանի, որոնք ինձ հարազատ են: Բայց նա էլ դեռ ամբողջովին չի գտել իրեն: Երիտասարդ գրողներից ես Արփի Ոսկանյանին եմ կայացած հեղինակ համարում: Գուցե նրա «Միկ» ժողովածուն այն տպավորությունն է թողել, թե նա փնտրտուքների մեջ է, բայց իմ կարծիքով՝ իսկական գրողը միշտ էլ փնտրտուքի մեջ է:

Ա. Ն. — Երիտասարդների մասին շատ են ասում, որ կյանքը, կենսափորձը պակասում է նրանց գրածներում: Ի՞նչ ես կարծում, կյանք-գրականություն հարաբերություններում ինչ-որ բան չի՞ փոխվել:

Հ. Ա. — Կարծում եմ՝ ասվածը տեղին է: Լավ, հաճախ՝ անչափ տպավորիչ պատկերներ են, բայց ոնց որ կյանքով չհագեցվեն: Դրանից այդ գործերը թուլանում են: Կյանքը շատ կարևոր է:

Ա. Ն. — Բայց ունենք բոլորովին հակառակ օրինակը՝ Անահիտ Հայրապետյանի պոեզիան, որ լրիվ կյանքային է և շատ քիչ են պոետական վերացարկումները: Դու ինչպե՞ս ես պատկերացնում այդ հարաբերությունները: Մարդը չկա մեր այսօրվա երիտասարդ պոետների մոտ: Ի՞նչ է լինելու սրա վերջը: Ոնց հասկացա՝ ջահելների հետ դու հույսեր չես կապում:

Հ. Ա. — Չէ, այդպես չէ: Դեռ ժամանակ կա, նրանց դեռ երկար ժամանակ է պետք: Պատկերավոր ասեմ. կար շենք, որը փլվեց, մնացին ավերակները, նրանք այդ ավերակների վրա եկան նաև: 60-ականների և նոր բանաստեղծների արանքում կա փլատակ՝

«կորուսյալ սերունդն» է: Հիմա նրանց համար դժվար է այդ ավերակների մեջ գտնել իրենց ճանապարհը, տարիներ են պետք: Պոեզիան, և առհասարակ գրականությունը կյանքային պետք է լինի: Օրինակ՝ ես իմ բանաստեղծություններում առկա շատ պատկերներ վերցրել եմ լուրերի թողարկումներից:

Ա. Ն – Իսկ խորքի առումո՞վ ինչ կասես: Խորք կա՞ այսօրվա պոեզիայում: Ասելիքի լճացում է ու մակերեսայնության հաղթարշավ՝ իմ կարծիքով: Էլի եմ ասում՝ սա ընդհանրական տպավորություն է, բացառություններ, անշուշտ, կան:

Հ. Ա. – Համաձայն եմ: Եթե խորքային բաներ կան, ապա ավագ սերնդի պոետների մոտ է: Վերջին հրապարակումներից Հովհաննես Գրիգորյանի շարքն էր այդպիսին: Գուցե յոթը բանաստեղծությունից երեքը, նույնիսկ չորսը չհավանես, բայց մնացածում նրա տաղանդը զգացվում է: Ավերակների վրա եկած բանաստեղծները դրսևորվելու երկու տարբերակ ունեին՝ կամ պիտի պայթեին՝ ստեղծելով հզոր պոեզիա, կամ էլ՝ այսպես, ոնց որ կա: Գուցե այսօրվա երիտասարդների ստեղծածը, նրանց փորձը կամուրջ դառնա գալիք սերնդի թռիչքների համար:

Ա. Ն. – Այսօրվա պոեզիայի խորքայնության մասին հարցս՝ խորքում քննադատությանն էլ էր առնչվում: Քանզի խորք չտալով՝ շատ բանաստեղծներ դժգոհում են, թե քննադատները չեն կարողանում թափանցել իրենց ստեղծագործության խորքերը: Ըստ քեզ՝ քննադատությունն այսօր ինչպես է ընթերցում արդի պոեզիան:

Հ. Ա. – Քննադատությունը կարդում է այնպես, ինչպես կա, քննադատությունն իրենից բաներ չի կարող հնարել: Այսօրվա երիտասարդ բանաստեղծների գրածը ոչ թե քաղաք է, այլ փոքր քաղաք՝ տարածության ու խորքի առումով: Մեծ ընդգրկումը չկա: Բարակ թելի պես զգացմունքը դարձնում են բանաստեղծություն: 21-րդ դարում, ի դեպ, դա շատ տարածված է: Բայց բարձր պոեզիան ուրիշ բան է: Ես, օրինակ, այսօրվա ջահելներից ոչ մեկի պոեզիան Հենրիկ Էդոյանի պոեզիայի հետ չեմ կարող համեմատել, որի 20 տողի մեջ ահռելի խորքեր են նվաճված: 21-րդ դարի բանաստեղծական տեքստը լայնակտավ պետք է լինի, պատկերես ոչ թե մի տուն իր բակ ու ծխնելույզով, այլ մի ամբողջ քաղաք՝ իր ներքին և արտաքին միստիկայով: Ոչ թե արձան, այլ՝ արձանա-

խումբ: Նախորդ դարում այդպիսի տեքստեր ստեղծել են Ռիլկեն, Էլիոթը, Սեն-Ժոն Պերսը և էլի ուրիշ տիեզերական հայացքով պոետներ, այդ թվում չմոռանանք մեր Թումանյանին ու Չարենցին: Պոետը Աստծո հայացքով պետք է քննի երկիրն ու երկինքը:

Ա. Ն. – Գուցե գրագիտության պակա՞ս կա նաև այսօրվա երիտասարդների մոտ, գրագիտություն՝ կարդացածության առումով:

Հ. Ա. – Գրագետ են, չէ՛: Կարդում են, կրթված են, նաև նրանց բանաստեղծական տողն է գրագետ: Բայց տողի ընդգրկումն է նեղ: Այսօր կարդում ենք մի 20 հոգու ու ասում ենք՝ լավ է: Բայց այսօր «լավ է»-ն քիչ է պոեզիայի համար: Դրանից մի քանի քայլ էլ վերև պետք գնալ, որպեսզի լուրջ, մնայուն պոեզիա ստեղծես: Այսօր նկատելի է մինիմում լրացնելու պես մի բան: Առաջին նշաձողն անցան ու արդեն բավարարվում են: Բոլորն անխտիր: Բարձր նշաձող որ դնես՝ ոչ մեկը չի թռնի: Թոքերը մեծ շնչառության համար չեն պատրաստել (առայժմ այդ տպավորությունն է), իրենց չեն զգում աշխարհի գրական ռիթմի մեջ, դուրս են այդ չփումից և մնում են իրենց շրջապատի, փողոցի պոետը...